ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ԲՈՒՀԵՐԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2023 Թ.

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2
I. ՀՀ ԲՈՒՀԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2023 Թ. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 4
2.1 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 4
2.2 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ 6
2.3 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԻՊԻ 9
2.4 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՄԵՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ 10
II. ԲՈՒՀԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ 11
3 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 11
3.1. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԸՍՏ ԲՈՒՀԵՐԻ 13
3.2. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ 15
3.3. ՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՄԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ 15
3.4. ԱՄԵՆԱՊԱՀԱՆՋՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 16
3.5. 2023 Թ. ՉՀԱՅՏԱԳՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 25
ԱՄՓՈՓՈՒՄ 25
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 29

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ բուհերի բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության քննությունների և մրցույթի արդյունքների վերաբերյալ Գնահատման և թեստավորման կենտրոնի (ԳԹԿ) իրականացրած վերլուծությունը հանրակրթության ոլորտի մասնագետներին և կրթության խնդիրներով հետաքրքրվող անհատներին է ներկայացնում 2023 թվականի հոկտեմբեր ամիսին անցկացված ընդունելության քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքները:

ՀՀ պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության քննությունների և մասնագիտությունների հայտագրման, թեստային քննությունների կազմակերպման ու անցկացման, մրցույթի անցկացման գործընթացը 2022 թվականից սկսել է իրականացնել ԳԹԿ-ն: Ներբուհական ընդունելության քննությունները կազմակերպել և անցկացրել են բուհերը: 2022 թ. ԳԹԿ-ն իրականացրել է միայն պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության գործընթացը, 2023 թ.՝ նաև ոչ պետական բուհերինը:

ԳԹԿ-ն 2022 թվականին անցկացրել է առնվազն մեկ թեստային քննություն պահանջող մասնագիտությունների ընդունելության մրցույթը, իսկ միայն ներբուհական քննություններ պահանջող մանագիտությունների, ինչպես նաև որոշ բուհերի նախապատրաստական դասընթացներն ավարտած դիմորդների ընդունելության մրցույթն անցկացրել են բուհերը:

2023 թ. նախապատրաստական դասընթացների կիրառմամբ ընդունելություն չի կազմակերպվել:

Հեռակա ուսուցման համակարգում ընդունելություն կազմակերպելու նպատակով բուհերին հատկացվել է 10550 վճարովի տեղ:

Դիմորդներն ընդունելության մրցույթին մասնակցելու համար կա՛մ հանձնել են քննություն, կա՛մ, պահպանելով տվյալ առարկայի քննությունից նախկինում ունեցած միավորը, երկրորդ անգամ հանձնել քննություն, կա՛մ պահպանել են ունեցած միավորը: Նախկին քննությունից ունեցած միավորը պահպանած և տվյալ քննությունը կրկին հանձնած դիմորդների համար մրցույթի անցկացման ժամանակ հաշվի է առնվել նախկին և ներկա միավորներից առավել բարձրը:

ԳԹԿ-ի պաշտոնական կայքում և զանգվածային լրատվամիջոցներով հեռակա ուսուցման ընդունելության վերաբերյալ պարբերաբար ներկայացվել են թեստային քննություններին և ընդունելության մրցույթին վերաբերող տեղեկություններ:

Վերլուծության առաջին մասում ներկայացված են հեռակա ուսուցման ընդունելության քննությունների, երկրորդ մասում՝ բուհերի ընդունելության մրցույթի արդյունքները:

I. ՀՀ ԲՈՒՀԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայաստանի Հանրապետության պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության կանոնների»[1] համաձայն, 2023 թ. ՀՀ պետական և ոչ պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության քննությունների և մասնագիտությունների հայտագրումն իրականացվել է ԳԹԿ-ի dimord.am կայքում՝ սեպտեմբերի 5-25-ն ընկած ժամանակահատվածում: Հոկտեմբերի 22-ից 27-ն անցկացվել են ընդունելության թեստային քննությունները:

Դիմորդները դիմում-հայտում նշել են մեկ բուհի մինչև երեք մասնագիտություն, որոնց համար սահմանված են եղել ընդունելության միևնույն քննությունները: «Ընդունելության քննություններ» բաժնի սյունակում թեստային քննությունների առարկաները «կամ» բառով տարանջատված լինելու դեպքում դիմորդներին թույլատրվել է ընտրել նշված քննություններից մեկը:

Ընդունելության թեստային քննությունները կազմակերպվել և անցկացվել են քննական կենտրոններում, որոնց ցանկը մինչև 2023 թ. հոկտեմբերի 5-ը հաստատել է ԳԹԿ տնօրենը: Քննությունների անցկացման գործընթացին մասնակցել են քննական կենտրոնի ղեկավարը, ԳԹԿ ներկայացուցիչները, քննության ընթացքի կազմակերպիչները, համակարգչային օպերատորը, քննական կենտրոնի հերթապահը, որոնք իրենց աշխատանքը քննությունների ընթացքում իրականացրել են ԳԹԿ տնօրենի կողմից հաստատված աշխատակարգերի համաձայն:

Հեռակա ուսուցման ընդունելության քննություններ հանձնելու նպատակով dimord.am կայքում թեստային և ներբուհական քննություններ է հայտագրել 4225 դիմորդ, որոնցից 3373-ը՝ երկու թեստային, 835-ը՝ մեկից ավելի ներբուհական, իսկ 17-ը՝ մեկական թեստային և ներբուհական քննություններ հանձնելու համար: Այսպիսով, առնվազն մեկ թեստային քննություն է հայտագրել 3390 դիմորդ, ներբուհական քննություն՝ 852-ը:

Հայտագրված դիմորդներից 4116-ը եղել են Հայաստանի, 53-ը՝ Ռուսաստանի, 45-ը՝ Արցախի, 4-ը՝ Վրաստանի, 7-ը՝ այլ երկրների քաղաքացիներ:

2563 դիմորդ եղել են 2023 թվականի շրջանավարտներ (ՀՀ-ից՝ 2479, Արցախից՝ 37, Ռուսաստանից՝ 38, Վրաստանից՝ 3, այլ երկրներից՝ 6 դիմորդ), 1662-ը՝ նախորդ տարիների (ՀՀ-ից՝ 1637, Արցախից՝ 8, Ռուսաստանից՝ 15, այլ երկրներից՝ 2), որոնցից 530-ը դպրոցն ավարտել է 2022 թվականին (ՀՀ-ից՝ 519, Արցախից՝ 3, Ռուսաստանից՝ 8): 2023 թ. շրջանավարտներից 2087-ը հայտագրել են երկու թեստային քննություն, 470-ը՝ մեկից ավելի ներբուհական քննություններ, 6-ը՝ մեկական թեստային և ներբուհական քննություններ: Ըստ այդմ, առնվազն մեկ թեստային քննություն է հայտագրել 2093 դիմորդ, առնվազն մեկ ներբուհական քննություն՝ 476-ը:

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166688

Թեստային քննություններն անցկացվել են 14 քննական կենտրոններում (Երևանում՝ 9, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզերում՝ մեկական)։ Դիմորդները քննություն են հանձնել են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն), «Ռուսաց լեզու», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Ֆիզիկա» և «Հայոց պատմություն» առարկաներից։ Քննությունների ժամանակացույցը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Հեռակա ուսուցման ընդունելության թեստային քննությունների ժամանակացույցը

Քննությունը	Տևողությունը (ժամ)	Քննության օրը
Օտար լեզու	2.5	22.10.2023 թ.
Քիմիա Ռուսաց լեզու	3 2.5	23.10.2023 թ.
Հայոց լեզու և հայ գրականություն	3	24.10.2023 թ.
Կենսաբանություն Աշխարհագրություն	3	25.10.2023 թ.
Մաթեմատիկա	3	26.10.2023 թ.
Հայոց պատմություն Ֆիզիկա	3	27.10.2022 թ.

Հեռակա ուսուցման ընդունելության թեստային քննություններն անցկացվել են առարկայական թեստերի չորսական տարբերակով, որոնք կազմված են եղել ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքներից, որոշ քննական առարկաների դեպքում՝ նաև պնդումների փնջերից։

Թեստային քննությունների արդյունքների գնահատումը կատարվել է պատասխանների ձևաթղթում դիմորդների կատարած նշումների հիման վրա՝ 20 միավորային սանդղակով, որում դրական են համարվում 7.5 և ավելի միավորները:

Ընտրովի և կարճ պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանի համար ըստ այդ սանդղակի տրվել է 0.25 միավոր։ Պնդումների փնջի յուրաքանչյուր պնդման ճիշտ պատասխանի համար տրվել է 0.25 միավոր, յուրաքանչյուր սխալ պատասխանի դեպքում տվյալ փնջին տրվելիք միավորներից հանվել է 0.25 միավոր։ «Չգիտեմ» պատասխանի դեպքում միավոր չի տրվել և չի հանվել։ Պնդումների փնջին միավոր չի տրվել նաև տվյալ փնջի միավորների գումարի արդյունքում ստացված բացասական թվի կամ 0-ի դեպքում։ Այլ առաջադրանքներից հավաքած միավորների վրա տվյալ փնջի միավորները չեն ազդել:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2023 Թ. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2.1 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Աղյուսակ 2-ում ըստ քննական առարկաների ներկայացված են 2023 թ. բուհերի հեռակա ուսուցման ընդունելության թեստային քննությունների մասնակիցների թվերը[2],

[2] **Մասնակիցների թվից** կախված է միջին միավորի հուսալիությունը. մասնակիցների թվի մեծ լինելը նպաստում է ստանդարտ շեղման նվազմանը, որի արդյունքում միջին միավորը դառնում է հուսալի:

միջին[3] միավորները, ինչպես նաև դրական միավորի շեմը չհաղթահարած և 18-20 միավոր հավաքած դիմորդների թվերը և տոկոսները:

Աղյուսակում թեստային քննությունների մասնակիցների թիվը և միջին միավորը հաշվարկված են դիմում-հայտում ընտրած քննության դիմաց «Հանձնում եմ» և «Պահպանում եմ և հանձնում» նշումները կատարած դիմորդներից քննության ներկայացածների թվի և հավաքած միավորների հիման վրա:

Աղյուսակ 2. 2023 թ. հեռակա ուսուցման ընդունելության թեստային **քննությունների ընդհանուր արդյունքները**

Քննական առարկաները	Հայտագրված-ների թիվը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Առավելագույն միավորը	Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդներ		18-20 միավոր հավաքած դիմորդներ	
					թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Մաթեմատիկա	1440	1143	7,0	19,75	657	57,5	9	0,8
Հայոց լեզու և հայ գրականություն	1392	1180	6,6	19,25	826	70,0	2	0,2
Անգլերեն	821	741	8,8	19,25	331	44,7	23	3,1
Հայոց պատմություն	353	263	8,6	20	124	47,1	16	6,1
Ֆիզիկա	252	204	4,3	13,75	187	91,7		
Կենսաբանություն	248	204	5,6	17	153	75,0		
Ռուսաց լեզու	177	153	7,6	16	69	45,1		
Քիմիա	103	96	6,5	14,5	62	64,6		
Աշխարհագրություն	29	25	6,5	10	17	68,0		
Գերմաներեն	7	7	10,8	16	1	14,3		
Ֆրանսերեն	6	5	10,7	13				

Աղյուսակ 2-ում տեսնում ենք, որ հայտագրված դիմորդների թվով առաջատարը եղել է «Մաթեմատիկա» առարկայի քննությունը (1440 դիմորդ), մասնակիցների թվով՝ «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայինը: Թեստային քննությունների միջին միավորները բաշխվել են 4.3-ից (ֆիզիկա) մինչև 10.8 (գերմաներեն) միջակայքում: Առավելագույն միավորների սյունակից երևում է, որ 20 միավոր արձանագրվել է միայն հայոց պատմությունից: Առավելագույն միավորի ամենացածր ցուցանիշը եղել է աշխարհագրությունից՝ 10: Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների տոկոսները, բացի գերմաներենից (14.3%), եղել են շատ բարձր՝ 44.7-ից (անգլերեն) մինչև 91.7 (ֆիզիկա) տոկոս: 18-20 միջակայքում միավորներ են արձանագրվել միայն մաթեմատիկայից, հայոց լեզու և հայ գրականությունից, անգլերենից և հայոց պատմությունից (0.2-6.1%):

[3] **Միջին միավորը** բնութագրում է քննություն հանձնողների պատրաստվածության միջին մակարդակը:

2.2 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ

Աղյուսակ 3-ում ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ներկայացված են հեռակա ուսուցման ընդունելության թեստային քննությունների մասնակիցների թվերը և միջին միավորները: Աղյուսակում գունավորած են տվյալ վարչատարածքային միավորի՝ յուրաքանչյուր քննության ընդհանուր միջին միավորը գերազանցած ցուցանիշների վանդակները: Յուրաքանչյուր առարկայից արձանագրված ամենաբարձր միջին միավորը շրջանակված է հաստ գծով:

Աղյուսակ 3. 2023 թ. հեռակա ուսուցման ընդունելության քննությունների արդյունքներն ըստ ՀՀ վարչատարարածքային միավորների

	Երևան		Արա-գածոտն		Արարատ		Արմավիր		Գեղարքու-նիք		Լոռի		Կոտայք		Շիրակ		Սյունիք		Վայոց ձոր		Տավուշ		Ընդհանուր միջին միավորը
	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	
Մաթեմատիկա	428	7,9	38	6,5	96	7,1	86	6,7	90	6,3	92	6,2	79	7,1	82	6,2	73	5,9	27	6,6	35	5,8	7
Հայոց լեզու և հայ գրականություն	388	6,9	51	6,8	94	7	70	6,3	105	6,5	125	6,4	58	6,8	102	6,6	70	5,7	27	6,4	76	5,8	6,6
Անգլերեն	325	9,9	26	8,7	50	7,1	58	8,6	48	7,7	51	8,6	58	8,2	49	7,5	20	7,8	14	9,6	32	6,9	8,8
Հայոց պատմություն	95	9,5	17	8,2	13	8,3	19	8,1	34	8,3	22	8,6	13	10	14	9,1	14	7,6	5	6,9	12	5,5	8,6
Կենսաբանություն	55	5,9	12	6,1	25	4,8	16	6,3	12	3,9	23	4,9	16	6,2	22	5,9	4	5,9	3	5,1	10	5,8	5,6
Ֆիզիկա	65	4,5	7	4	16	3,9	17	5	14	3,7	15	4	17	3,4	15	3,8	29	4,8	5	3,7	2	3,6	4,3
Ռուսաց լեզու	41	8,3	2	5,9	12	6,7	10	6,9	11	6,5	19	9,8	7	7,8	19	7,9	6	7,2	2	6,4	21	5,6	7,6
Քիմիա	35	6,1	8	6,2	9	6	11	8	3	4,9	9	6,2	3	6,7	7	6,2	3	4,3			5	10,5	6,5
Աշխարհագրություն	6	5,5			4	6	2	8,5	5	7,2	1	6	3	6,2	4	7,1							6,5
Ֆրանսերեն	4	10,1					1	13															10,7
Գերմաներեն	3	11,9			1	13,5			2	6,5					1	13,5							10,8

Աղյուսակ 3-ում տեսնում ենք, որ ընդհանուր միջին միավորից բարձր միջին միավորների քանակով առաջատար է եղել Երևանը (8 առարկայից), մարզերից՝ Կոտայքի մարզը (6 առարկայից)։ Մաթեմատիկայից, անգլերենից և գերմաներենից ամենաբարձր միջին միավորն արձանագրվել է Երևանում (համապատասխանաբար՝ 7.9, 9.9, 11.9), կենսաբանությունից, ֆիզիկայից և աշխարհագրությունից՝ Արմավիրի մարզում (համապատասխանաբար՝ 6.3, 5, 8.5), հայոց լեզու և հայ գրականությունից՝ Արարատի (7), ռուսաց լեզվից՝ Լոռու (9.8), հայոց պատմությունից՝ Կոտայքի (10), քիմիայից՝ Տավուշի (10.5) մարզերում։

Աղյուսակ 4-ում ըստ քննության վերաբերյալ դիմում-հայտում կատարված նշման («Հանձնում եմ», «Պահպանում եմ», «Պահպանում եմ և հանձնում») ներկայացված են թեստային քննությունների մասնակիցների թվերը և միջին միավորները։ «Պահպանում եմ և հանձնում» նշում կատարած դիմորդների մի մասը, նորից քննություն չի հանձնել, հետևաբար, հաշվարկներ կատարելիս օգտագործվել են նրանց պահպանած միավորները։ Ըստ այդմ, աղյուսակ 4-ում մի քանի քննական առարկաների՝ «Հանձնում եմ» և «Պահպանում եմ և հանձնում» նշումները կատարած դիմորդների թվերի գումարը կարող է տարբերվել աղյուսակ 2-ի՝ նույն առարկաների «Մասնակիցների թիվը» սյունակի թվերից։ Աղյուսակ 4-ի միջին միավորները ներկայացված են դիագրամ 1-ում, որտեղ «Հանձնում եմ» նշման համապատասխան միջին միավորները դասավորված են աճման կարգով։

Աղյուսակ 4. Քննություն հանձնած և քննության նախկին միավորը պահպանած դիմորդների թվերը և միջին միավորները

Դիմում-հայտում կատարված նշումը		Մաթեմատիկա	Հայոց լեզու և հայ գրականություն	Անգլերեն	Ֆիզիկա	Կենսաբանություն	Հայոց պատմություն	Ռուսաց լեզու	Քիմիա	Աշխարհագրություն	Ֆրանսերեն	Գերմաներեն
Հանձնում եմ	Դիմորդների թիվը	1084	1103	678	198	195	220	148	89	24	5	7
	Միջին միավորը	7,0	6,5	8,7	4,3	5,5	7,8	7,6	6,5	6,5	10,7	10,8
Պահպանում եմ	Դիմորդների թիվը	499	544	580	47	59	130	43	14	20	5	2
	Միջին միավորը	10,3	10,7	12,4	11,3	10,5	13,9	10,0	11,6	11,3	10,4	11,1
Պահպանում եմ և հանձնում	Դիմորդների թիվը	69	91	68	7	12	48	7	7	1		
	Միջին միավորը	8,9	8,4	11,5	5,9	8,6	13,0	8,4	7,4	7,0		

Դիագրամ 1. Միջին միավորներն ըստ «Հանձնում եմ», «Պահպանում եմ», «Պահպանում եմ և հանձնում» նշումների



Դիագրամից երևում է, որ «Հանձնում եմ» նշում կատարած դիմորդների ամենացածր միջին միավորն արձանագրվել է ֆիզիկայից (4.3), իսկ ամենաբարձրը՝ գերմաներենից (10.8)։ 7.5-ից բարձր են եղել միայն հայոց պատմության և բոլոր օտար լեզուների միջին միավորները։ «Պահպանում եմ» նշած դիմորդների հավաքած միջին միավորները եղել են ամենաբարձրը, որովհետև պահպանվում են միայն դրական միավորի շեմից (7.5) բարձր միավորները։ «Պահպանում եմ և հանձնում» նշած դիմորդների հավաքած միջին միավորները միջին դիրք են զբաղեցրել մյուս երկու նշումների միջին միավորների միջև։ Պահպանած միավորը և հանձնած քննության միավորը համեմատելով՝ ընդունելության մրցույթի ժամանակ հաշվի է առնվել դրանցից առավել բարձրը։

2.3 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԻՊԻ

Աղյուսակ 5-ում ներկայացված են ՀՀ բուհերի 2023 թ. հեռակա ուսուցման ընդունելության թեստային քննությունների արդյունքներն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի տիպերի: Քաղաքները դիտարկվել են երկու, գյուղերը՝ մեկ խմբով: Աղյուսակում գունավորած են տվյալ քննության ընդհանուր միջին միավորից բարձր միջին միավորների վանդակները: Արձանագրված ամենաբարձր միջին միավորների վանդակները շրջանակված են հաստ գծով: Եթե տվյալ քննությանը ներկայացել է մեկ դիմորդ, ապա նրա միավորը չի համեմատվել միջին միավորների հետ:

Աղյուսակ 5. 2023 թ. հեռակա ուսուցման ընդունելության թեստային քննությունների արդյունքներն ըստ բնակավայրի տիպի

	Խոշոր քաղաքներ		Միջին և փոքր քաղաքներ		Գյուղեր		Ընդհանուր միջին միավորը
	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	
Հայոց լեզու և հայ գրականություն	1161	6,6	13	6,7	6	6	6,6
Մաթեմատիկա	1123	7	13	8,3	7	8,2	7
Անգլերեն	731	8,8	6	7,5	4	7,7	8,8
Հայոց պատմություն	260	8,6	3	9,6			8,6
Կենսաբանություն	201	5,6			3	6,2	5,6
Ֆիզիկա	192	4,2	8	6,1	4	4,3	4,3
Ռուսաց լեզու	151	7,3	1	6,5	1	8,25	7,6
Քիմիա	94	6,5			2	5,3	6,5
Աշխարհագրություն	25	6,5					6,5
Գերմաներեն	7	10,8					10,8
Ֆրանսերեն	5	10,7					10,7

Աղյուսակ 5-ից երևում է, որ ընդհանուր միջին միավորներից բարձր միջին միավորներ են արձանագրվել միջին և փոքր քաղաքներում (հայոց լեզու և հայ գրականությունից, հայոց պատմությունից, ֆիզիկայից) և գյուղերում (կենսաբանությունից):

2.4 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ

2023 թ. հեռակա ուսուցման թեստային մեկ կամ երկու քննություն է հայտագրել 3390 դիմորդ (իգական սեռի՝ 1556, արական սեռի՝ 1834): Նրանցից 2023 թ. շրջանավարտ են եղել 2093-ը (1066 իգական (այդ սեռի բոլոր մասնակիցների 68.5%-ը) և 1027 արական (այդ սեռի բոլոր մասնակիցների 56%-ը) սեռերի): Նախորդ տարվա 449 շրջանավարտներից 236-ը եղել են իգական, 213-ը՝ արական սեռի: Ընդունելության քննություն հանձնած իգական սեռի դիմորդներից ամենաավագը եղել է 1955 թ. ծնված, արական սեռինը՝ 1975 թ.:

Աղյուսակ 6-ում ըստ դիմորդների սեռի ներկայացված են ընդունելության թեստային քննությունների մասնակիցների թվերը և միջին միավորները: Աղյուսակում գունավորած են տվյալ թեստային քննության ընդհանուր միջին միավորը գերազանցող ցուցանիշների վանդակները: Արձանագրված ամենաբարձր միջին միավորների վանդակները շրջանակված են հաստ գծով:

Աղյուսակ 6. 2023 թ. հեռակա ուսուցման ընդունելության թեստային քննությունների արդյունքներն ըստ դիմորդների սեռի

Քննական առարկաները	Իգական սեռ		Արական սեռ		Ընդհանուր միջին միավորը
	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	
Հայոց լեզու և հայ գրականություն	605	7,3	575	5,8	6,6
Անգլերեն	402	9,3	339	8,3	8,8
Մաթեմատիկա	342	8,0	801	6,6	7
Կենսաբանություն	147	6,1	57	4,4	5,6
Հայոց պատմություն	131	9,5	132	7,7	8,6
Ռուսաց լեզու	88	7,6	65	7,6	7,6
Քիմիա	73	6,6	23	6,2	6,5
Ֆիզիկա	13	5,9	191	4,1	4,3
Աշխարհագրություն	11	6,7	14	6,4	6,5
Ֆրանսերեն	5	10,7			10,7
Գերմաներեն	5	11,5	2	9,1	10,8

Աղյուսակ 6-ից երևում է, որ բոլոր քննություններից իգական սեռի ներկայացուցիչների հավաքած միջին միավորները բարձր են եղել տվյալ քննության ընդհանուր միջին և արական սեռի ներկայացուցիչների հավաքած միջին միավորներից:

Իգական սեռի հավաքած ամենաբարձր միջին միավորը եղել է գերմաներենից՝ 11.5, ամենացածրը՝ ֆիզիկայից՝ 5.9, արական սեռինը, համապատասխանաբար, գերմաներենից՝ 9.1, և ֆիզիկայից՝ 4.1:

II. ԲՈՒՀԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ

3 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

➢ ***Հայտագրում***

2023 թ. ԳԹԿ-ն կազմակերպել և անցկացրել է պետական և ոչ պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության քննությունները և մրցույթը։

2023-2024 ուսումնական տարում ՀՀ բուհերում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության նպատակով պետության կողմից բուհերին տրամադրվել են 10550 վճարովի տեղեր, որոնցից 8435 տեղերի համար առաջին հայտով լրացվել է դիմում-հայտ, 2115-ի համար՝ ոչ։ ԳԹԿ-ի էլեկտրոնային բազաներում գրանցված պետական բուհերին 10550 տեղերից հատկացվել է 6574-ը, ոչ պետականներին՝ 3976-ը։ Հայտագրված մասնագիտությունների 8435 տեղերից 6705-ը կազմել են պետական, 1730-ը՝ ոչ պետական բուհերին հատկացված տեղերը։

ԳԹԿ dimord.am կայքում 2023 թ. սեպտեմբերի 5-ից մինչև 25-ը ներառյալ դիմորդները գրանցվել և լրացրել են դիմում-հայտ՝ նշելով մեկ բուհի մինչև երեք մասնագիտություն, որոնց համար սահմանված են ընդունելության միևնույն քննությունները։ Դիմում-հայտում նշած մասնագիտությունների համար սահմանված յուրաքանչյուր քննության անվան դիմաց դիմորդները կա՛մ նշել են «Հանձնում եմ», կա՛մ «Պահպանում եմ», կա՛մ «Պահպանում եմ և հանձնում»։ Մրցույթի անցկացման ժամանակ «Հանձնում եմ» նշում կատարած դիմորդների դեպքում հաշվի են առնվել հեռակա ուսուցման ընդունելության նպատակով անցկացված քննությունների գնահատականները, «Պահպանում եմ» նշման դեպքում՝ կարգով սահմանված ժամկետում օգտագործման թույլատրված նախկին գնահատականները, «Պահպանում եմ և հանձնում» նշման դեպքում՝ նախկինում ունեցած և հեռակա ուսուցման նպատակով կրկին հանձնած քննության գնահատականներից առվել բարձրը։

Հայտագրման փուլի ավարտին dimord.am կայքում առաջին հայտով հայտագրվել է 4225 դիմորդ (3940-ը՝ պետական, 285-ը՝ ոչ պետական բուհերում)։

➢ ***Ընդունելություն***

Բուհերի հեռակա ուսուցման ընդունելության մրցույթն անցկացվել է դիմում-հայտի առաջին տողով ընտրված մասնագիտության գերակայությամբ։ Հայտագրված առաջին մասնագիտության մրցույթով չանցած դիմորդների համար մրցույթն անցկացվել է դիմում-հայտում նշված մասնագիտությունների հերթականությանը համապատասխան, եթե դրանցում առկա են եղել թափուր տեղեր։ Բուհ ընդունված դիմորդների ցուցակը կազմվել է տվյալ մասնագիտության համար սահմանված քննություններից հավաքած միավորների գումարի նվազման կարգով։

Աղյուսակ 7-ում տեսնում ենք, որ հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի արդյունքում ընդունվել է 2113 (հայտագրվածների 50%-ը) դիմորդ։ Բուհ ընդունված 2113

դիմորդներից 2016-ն ընդունվել են ընդհանուր մրցույթով, 97-ը՝ արտոնություններով (ընդունելության կանոնների 42-րդ և 43-րդ կետերի համաձայն):

Աղյուսակ 7. Ընդհանուր տվյալներ 2023 թ. հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի վերաբերյալ

Հատկացված տեղերի թիվը	**10550**
Այդ թվում՝	
Հայտագրված մասնագիտություններ	8435
Չհայտագրված մասնագիտություններ	2115
Հայտագրվածների թիվը առաջին հայտով	**4225**
Ընդունվածների թիվը	**2113**
Այդ թվում՝	
Ընդհանուր մրցույթով ընդունվածներ	2016
42-րդ կետի արտոնությամբ ընդունվածներ*	5
43-րդ կետի արտոնությամբ ընդունվածներ**	92
Չընդունվածների թիվը	**2112**
Այդ թվում՝	
Դրական միավորներով չընդունվածներ	66
Անբավարար գնահատական(ներ)ով չընդունվածներ	1423
Որևէ քննության չներկայանալու պատճառով չընդունվածներ	623

Հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի ժամանակ ընդունելության կանոնների **42-րդ և 43-րդ կետերի արտոնություններով** ընդունելությունը կազմակերպվել է պահուստային տեղերի հաշվին:

* ***42-րդ կետի արտոնություն***

Ընդունելության քննությունը դրական միավորով հանձնելու դեպքում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մրցույթից դուրս ընդունվում են ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողները, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների ծնողները, ամուսինը (կինը), մինչև 27 տարեկան զավակները:

** ***43-րդ կետի արտոնություն***

Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և վերջին մեկ տարվա ընթացքում զորացրված դիմորդները, քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում, բուհ են ընդունվում մրցույթից դուրս:

Չընդունված 2112 դիմորդներից 66-ը, ունենալով դրական միավորներ, դուրս են մնացել ընդունելության մրցույթից, 1423-ն առնվազն մեկ քննությունից ստացել են անբավարար գնահատական, իսկ 623-ը չեն ներկայացել առնվազն մեկ քննության:

Արտոնություն ունեցած 97 դիմորդների՝ պահուստային տեղերի հաշվին իրականացված ընդունելության պարագայում մրցույթի ամփոփումից հետո թափուր են մնացել հատկացված 10550 տեղերից 8534-ը (80.9%), իսկ հայտագրված մասնագիտություններին հատկացված 8435 տեղերից՝ 6419-ը (75.2%):

Հեռակա ուսուցման ընդունելության նպատակով անցկացված երկու թեստային քննություն հանձնելու արդյունքում ընդունվել է 317 դիմորդ, 487-ն ընդունվել է՝ պահպանելով ունեցած մեկ քննության միավորը և հանձնելով ևս մեկ քննություն, 509 դիմորդ ընդունվել է՝ պահպանելով երկու քննությունների միավորները, 37-ը հանձնել է երկու թեստային քննություն՝ միաժամանակ պահպանելով նախկինից ունեցած միավորները, 71-ը, պահպանելով մեկ քննության միավորը, հանձնել է ևս մեկ թեստային քննություն, որի դեպքում նույնպես պահպանել է նախկին միավորը: Այսպիսով, երկու թեստային քննություններից ունեցած դրական միավորներով ընդունվել է 1421 դիմորդ:

Ներբուհական քննությունների արդյունքներով ընդունվել է 684 դիմորդ, մեկական ներբուհական և թեստային քննությունների արդյունքներով՝ 8 դիմորդ:

Ընդունելության երկու քննություններից ունեցած դրական գնահատականներով մրցույթից դուրս է մնացել 66 դիմորդ: Նրանցից 33-ն առաջին հայտով դիմել էր ՀՖԿՍՊԻ («Մասնագիտական մանկավարժություն-փրկարարական գործ»՝ 31 դիմորդ, «Մասնագիտական մանկավարժություն-վոլեյբոլ»՝ 2), 28-ը՝ ԵՊՀ («Իրավագիտություն»՝ 23, «Հանրային կառավարում»՝ 3, «Հոգեբանություն»՝ 2), 4-ը՝ ՀՊՄՀ («Գեղարվեստական լուսանկարչություն»՝ 3, «Օպերատորություն»՝ 1), 1-ը՝ ՇՊՀ («Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»):

2113 ընդունվածներից 2085-ն ընդունվել է առաջին հայտով, 12-ը՝ երկրորդ, 16-ը՝ երրորդով: Երկրորդ և երրորդ հայտերով ընդունված 28 դիմորդներն ընդունվել են ԵՊՀ («Կրոնական զբոսաշրջություն»՝ 12, «Սոցիալական աշխատանք»՝ 6, «Միջազգային հարաբերություններ»՝ 6, «Հայոց լեզու և գրականություն»՝ 2, «Ֆինանսներ (ըստ ոլորտի)»՝ 1, «Պատմություն»՝ 1 դիմորդ):

3.1. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԲՈՒՀԵՐԻ

Աղյուսակ 8-ում ներկայացված են տվյալներ 2023 թ. հեռակա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցած 38 բուհերի (29 բուհերի և դրանցից 6-ի 9 մասնաճյուղերի) հեռակա ուսուցման ընդունելության վերաբերյալ: Ներկայացված բուհերից 22-ն ունեն պետական, 16-ը՝ ոչ պետական կարգավիճակ: Աղյուսակում բուհերը դասավորված են հատկացված տեղերի թվի նվազման կարգով:

Աղյուսակ 8. 2023 թ. հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի արդյունքներն ըստ բուհերի

Բուհը	Հատկացված տեղերի թիվը	Հայտագրվածների թիվը 1-ին հայտով	Ընդունվածներ			
			Ընդամենը	այդ թվում՝		
				ընդհանուր մրցույթով	արտոնությամբ	
					Կետ 42	Կետ 43
ՀՊՄՀ	1335	452	204	204		
ՀԱԱՀ	900	242	26	26		
ՀՊՏՀ	655	675	395	380		15
ՀԱՊՀ	510	290	142	133	1	8
ՃՇՀԱՀ	461	239	119	118		1
ԲՊՀ	450	186	108	108		
Եվրասիա միջազգային համալսարան	385	35	9	9		
ԵՊՀ	370	561	350	337	1	12
ՀՖԿՍՊԻ	363	361	298	253	2	43
ՇՊՀ	275	234	97	94		3
Հյուսիսային համալսարան	275	74	3	3		

Բուհը	Հատկացված տեղերի թիվը	Հայտագրվածների թիվը 1-ին հարցում	Ընդունվածներ			
			Ընդամենը	այդ թվում՝		
				ընդհանուր մրցույթով	արտոնությամբ	
					Կետ 42	Կետ 43
ՎՊՀ (Վանաձոր)	265	163	85	76	1	8
Եվրոպական համալսարան	245	4				
ԳՊՀ (Գավառ)	140	58	15	15		
ՀՌՀ	140	58	34	33		1
ՀԱԱՀ (Վանաձոր)	140	24				
ՄԽՀ	130	27	3	3		
ԳՊՀ (Գորիս)	120	71	12	12		
«Մխիթար Գոշ» համալսարան	115	14	3	3		
Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարան	115	87	80	80		
ԵՊՀ ԻՄ	110	105	32	32		
ԵԹԿՊԻ	100	47	32	31		1
ՀԱԱՀ (Սիսիան)	100	15	1	1		
Երևանի «Հայբուսակ» համալսարան	100	3				
Երևանի գյուղատնտեսական համալսարան	75	2				
ՀԱՊՀ ԳՄ	60	29	9	9		
ՀՊՏՀ ԳՄ	60	31	16	16		
«ԱԶՊԱԹ-Վետերան»	60	19				
Վարդենիսի մանկավարժական ինստիտուտ	60	9	1	1		
ԳՊՀ (Գյումրի Պրոգրես)	60	6				
ՀԱՊՀ ՎՄ	57	28	11	11		
ՀԱՊՀ ԿՄ	53	52	9	9		
ԵՊԿ ԳՄ	41	19	17	17		
Երևանի «Գլաձոր» համալսարան	30	1				
Երևանի «Գալիք» համալսարան	25	1				
Հրազդանի հումանիտար ինստիտուտ	25	1	1	1		
ԳՀՍ Ուրարտու համալսարան	20	1				
«Հայբուսակ» համալսարանի Գյումրու «Շիրակացի» մասնաճյուղ	10	1	1	1		
Ընդամենը	**8435**	**4225**	**2113**	**2016**	**5**	**92**

Աղյուսակ 8-ի «Ընդամենը» տողում տեսնում ենք, որ հատկացված 8435 տեղերի (հայտագրված մասնագիտություններին հատկացված տեղերի թիվն է) համար հայտագրվել է 4225 դիմորդ, որոնցից 2113-ն է ընդունվել (հայտագրվածների 50%-ը): Նրանցից 2016-ն ընդունվել է ընդհանուր մրցույթով, 5-ը՝ բուհերի հեռակա ուսուցման ընդունելության կանոնների 42-րդ, 92-ը՝ 43-րդ կետերի արտոնություններով:

Հատկացված տեղերի ամենամեծ թիվն արձանագրվել է ՀՊՄՀ-ում (1335 տեղ), հայտագրված և ընդունված դիմորդներինը՝ ՀՊՏՀ-ում (համապատասխանաբար՝ 675 և 395): Ընդհանուր մրցույթով ընդունվածների թվով առաջատարը նույնպես եղել է ՀՊՏՀ-ն (380), արտոնություններով ընդունվածների թվով՝ ՀՖԿՍՊԻ-ն (45):

Աղյուսակից երևում է, որ վեց ոչ պետական և մեկ պետական (ՀԱԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղ) բուհեր ոչ-ոք չի ընդունվել, թեև եղել են այդ բուհերի մասնագիտություններ

հայտագրած դիմորդներ: Այդ բուհերի հայտագրված մասնագիտություններին հատկացվել էր 755 տեղ, և հայտագրվել էր 61 դիմորդ:

3.2. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ

Աղյուսակ 9-ում, որտեղ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ներկայացված են 2023 թ. բուհերի հեռակա ուսուցման ընդունելության նպատակով dimord.am կայքում առաջին հայտով հայտագրված դիմորդների և ընդունվածների թվերն ու տոկոսները, գունավորած են վիճակագրական ամենաբարձր տվյալներով վարչատարածքային միավորների համապատասխան ցուցանիշների վանդակները:

Աղյուսակ 9. 2023 թ. հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի արդյունքներն ըստ վարչատարածքային միավորների

Վարչա-տարածքային միավորը	Հայտա-գրվածների թիվը 1-ին հայտով	Ընդունվածներ	
		թիվը	տոկոսը
Երևան	1562	857	54,9
Արագածոտն	176	85	48,3
Արարատ	327	158	48,3
Արմավիր	323	171	52,9
Գեղարքունիք	312	134	42,9
Լոռի	345	167	48,4
Կոտայք	284	147	51,8
Շիրակ	353	160	45,3
Սյունիք	218	79	36,2
Վայոց ձոր	89	48	53,9
Տավուշ	199	89	44,7
Ընդամենը	4188	2095	50,0

Աղյուսակ 9-ում տեսնում ենք, որ 2023 թ. բուհերի հեռակա ուսուցման ընդունելության նպատակով ՀՀ-ից 1-ին հայտով հայտագրվել է 4188 դիմորդ: Ընդունվել է նրանցից 2095-ը (50%): ՀՀ-ից հայտագրվածները և ընդունվածները կազմել են հայտագրված բոլոր դիմորդների (4225) և ընդունվածների (2113) 99,1%-ը:

Բոլոր ցուցանիշներով առաջատար է եղել մայրաքաղաք Երևանը՝ 1562 հայտագրված և 857 ընդունված (հայտագրվածների 54.9%-ը): Մարզերից հայտագրվածների թվով առաջատար է եղել Շիրակը (353 դիմորդ), ընդունվածների թվով՝ Արմավիրը (171), ընդունվածների տոկոսով՝ Վայոց ձորը (53.9%):

Բուհ է ընդունվել Երևանից, Արմավիրի, Կոտայքի և Տավուշի մարզերից հայտագրված դիմորդների կեսից ավելին (51,8-54,9%-ը): Մնացած մարզերից ընդունվածները կազմել են 36.2-48.4%: Ընդունվածների ամենացածր՝ 36.2% տոկոս է արձանագրվել Սյունիքի մարզում:

3.3. ՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ

2023 թ. հեռակա ուսուցման ընդունելության նպատակով dimord.am կայքում մասնագիտություն հայտագրած 4225 դիմորդներից 2382-ը (56.4%) եղել են արական սեռի, 1843-ը (43.6%)՝ իգական սեռի: Ընդունված 2113 դիմորդներից 1075-ը (50.9%) եղել են արական, 1038-ը (49.1%)՝ իգական սեռի (դիագրամ 2):

2023 թ. բուհերում առկա ուսուցման նպատակով մասնագիտություն հայտագրած դիմորդների սեռային կազմում գերակշռել է իգական սեռը, մինչդեռ հեռակա ուսուցման նպատակով հայտագրվածների դեպքում արձանագրվել է հակառակ պատկերը:

Դիագրամ 2. Դիմորդների սեռային կազմը



Դիագրամ 3. Բուհ ընդունված դիմորդների սեռատարիքային կազմը (%)



Դիագրամ 2-ում տեսնում ենք, որ հայտագրվածներից իգական սեռի ներկայացուցիչների թիվը զգալիորեն պակաս է եղել արական սեռից (539-ով): Մինչդեռ ընդունվածների թվերը գրեթե հավասար են եղել (արական սեռը՝ 37-ով ավելի): Դրա պատճառն այն է, որ քննություններին չներկայացած և դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների մեջ գերակշռել են արական սեռի ներկայացուցիչները:

Դիագրամ 3-ում տոկոսներով ներկայացված է հեռակա ուսուցման նպատակով բուհ ընդունված դիմորդների սեռատարիքային կազմը: Ընդունվածների 50.9%-ը կազմած իգական սեռի ներկայացուցիչների տարիքային խմբերը ներկայացված են սեռատարիքային բուրգի առանցքի ձախ կողմում, արական սեռինը (49.1%)՝ աջ: Դիագրամից երևում է, որ ընդունվածների կեսից ավելին եղել են 2005 թ. ծնվածները, որոնց մեջ գերակշռել են իգական սեռի ներկայացուցիչները (բոլոր ընդունվածների 28.6%-ը): Այդ տարիքային խումբը ներկայացնում է 2023 թ. շրջանավարտներին: Իգական սեռի տոկոսն արականի համեմատությամբ գերակշռող է եղել նաև 2004 թ. ծնվածների խմբում:

Հայտագրված դիմորդները եղել են 18-ից մինչև 68 տարեկան (իգական սեռ՝ 18-68, արական՝ 18-55), բուհ ընդունվածները՝ 18-ից մինչև 60 տարեկան (իգական սեռ՝ 18-60, արական՝ 18-59): Իգական սեռի ընդունվածներից ամենաավագն ընդունվել է Երևանի պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ, արական սեռինը՝ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ:

3.4. ԱՄԵՆԱՊԱՀԱՆՋՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աղյուսակ 10-ում ներկայացված են 2023 թ. հեռակա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցելու նպատակով դիմում-հայտ լրացրած դիմորդների շրջանում ՀՀ

բուհերի ամենապահանջված տասը մասնագիտությունները, որոնք դասավորված են հայտագրվածների թվի նվազման կարգով:

Աղյուսակ 10. 2023 թ. հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի ամենապահանջված մասնագիտությունների տասնյակը

№	Բուհը *	Մասնագիտությունը	Տեղերի թիվը	Հայտագրվածների թիվը1-ին հարկով	Ընդունվածների թիվը**
1	ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	190	201	122
2	ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)	110	152	97
3	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավարժություն-փրկարարական գործ	55	115	75
4	ՀԱԱՀ	Ագրոբիզնես և ֆինանսներ	138	114	11
5	ՀՊՏՀ	Շուկայագիտություն (մարքեթինգ), (ըստ ոլորտի)	75	106	64
6	ԵՊՀ	Իրավագիտություն	40	98	44
7	ՀՊՄՀ	Հոգեբանություն	90	86	25
8	Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարան	Միջավայրի դիզայն	80	82	80
9	ՀՊՏՀ	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	125	81	51
10	ՀԱՊՀ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	50	77	44
		Ընդամենը	**953**	**1112**	**613**

* - Երևանում գործող բուհերի տվյալներում ընդգրկված չեն մարզերում գործող մասնաճյուղերի տվյալները:

** - Ընդունվածների թիվը որոշ մասնագիտությունների դեպքում մեծ է նախատեսված տեղերի թվից, քանի որ դրանցում ներառված են նաև արտոնություններով և ԿԳՄՄՆ ավելացրած տեղերով (հավասար միավորների դեպքում) ընդունվածների թվերը:

Ամենապահանջված մասնագիտությունների տասնյակին հատկացված 953 տեղերը կազմել են 2023 թ. բուհերի հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի համար հայտագրված մասնագիտություններին հատկացված 8435 տեղերի 11.3%-ը, առաջին հայտով 1112 հայտագրվածները՝ հայտագրվածների ընդհանուր թվի 26.3%-ը, 613 ընդունվածները՝ բոլոր ընդունվածների 29%-ը:

Աղյուսակ 10-ում տեսնում ենք, որ հայտագրված դիմորդների թվով առաջին երեք տեղերը զբաղեցրել են ՀՊՏՀ-ի «Ֆինանսներ», «Կառավարում» և ՀՖԿՍՊԻ-ի «Մասնագիտական մանկավարժություն-փրկարարական գործ» մասնագիտությունները: Առաջին հայտով այդ մասնագիտություններն ընտրել է 468 դիմորդ (բոլոր հայտագրվածների 11.1%-ը), ընդունվել է 294-ը (բոլոր ընդունվածների 13.9%-ը):

Դիտարկված տասնյակից ամբողջությամբ լրացել են ՀՖԿՍՊԻ-ի «Մասնագիտական մանկավարժություն-Փրկարարական գործ», ԵՊՀ-ի «Իրավագիտություն» և Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի «Միջավայրի դիզայն» մասնագիտություններին հատկացված տեղերը:

Ստորև բերված աղյուսակ 11-ում ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ներկայացված են ամենապահանջված մասնագիտությունների հնգյակները: Աղյուսակից երևում է, որ ամենահաճախը հանդիպում են «Կառավարում» (ՀՊՏՀ, ՇՊՀ, ՎՊՀ, Գորիսի ՊՀ), «Ֆինանսներ» (ՀՊՏՀ, ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղ), «Մասնագիտական մանկավարժություն-փրկարարական գործ» (ՀՖԿՍՊԻ) և «Իրավագիտություն» (ԵՊՀ, ՎՊՀ, Գավառի ՊՀ, Գորիսի ՊՀ) մասնագիտությունները: «Ֆինանսներ» մասնագիտությունը հայտագրվածների թվով առաջին տեղում է եղել Երևանում, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի և Տավուշի մարզերում:

Աղյուսակ 11. 2023 թ. հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի ամենապահանջված մասնագիտությունների հնգյակներն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Վարչատարածքային միավորը	Բուհը	Մասնագիտությունը	Հայտագրվածների թիվը 1-ին հայտով	Ընդունվածների թիվը
ԵՐԵՎԱՆ	ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	109	69
	ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)	79	53
	ՀՊՏՀ	Շուկայագիտություն (մարքեթինգ), (ըստ ոլորտի)	63	38
	ԵՊՀ	Իրավագիտություն	46	25
	Մեսրոպ Մաշտոցի անվ. համալսարան	Միջավայրի դիզայն	44	42
ԱՐԱԳԱԾՈՏՆ	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավարժություն-փրկարարական գործ	15	9
	ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	11	8
	ՀՊՏՀ	Տնտեսագիտություն	8	3
	ՀՊՄՀ	Լոգոպեդիա	5	
	ՀՊՄՀ	Պատմություն	5	2
ԱՐԱՐԱՏ	ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	25	14
	ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)	18	9
	ՀԱԱՀ	Ագրոբիզնես և ֆինանսներ	16	1
	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավարժություն-	12	9

Վարչատարածքային միավորը	Բուհը	Մասնագիտությունը	Հայտագրվածների թիվը 1-ին հայտով	Ընդունվածների թիվը
ԿՈՏԱՅՔ	ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	13	7
	ՀԱԱՀ	Ագրոբիզնես և ֆինանսներ	12	
	ՀՊՏՀ	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	11	7
	ՀՊՏՀ	Շուկայագիտություն (մարքեթինգ), (ըստ ոլորտի)	10	9
	Մեսրոպ Մաշտոցի անվ. համալսարան	Միջավայրի դիզայն	10	10
ՇԻՐԱԿ	ՇՊՀ (Գյումրի)	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	45	28
	ՇՊՀ (Գյումրի)	Կառավարում (ըստ ոլորտի)	32	9
	ՇՊՀ (Գյումրի)	Նախնական զինվորական պատրաստություն	28	23
	ՇՊՀ (Գյումրի)	Հոգեբանություն	22	9
	ՀՊՏՀ ԳՄ	Կառավարում (ըստ ոլորտի)	18	8
ՍՅՈՒՆԻՔ	ԳՊՀ (Գորիս)	Կառավարում (ըստ ոլորտի)	30	3
	ՀԱՊՀ ԿՄ	Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում	27	3
	ՀԱՊՀ ԿՄ	Տնտեսագիտություն	23	6
	ԳՊՀ (Գորիս)	Իրավագիտություն	12	2

		փրկարարական գործ		
	ՀՊՄՀ	Հոգեբանություն	11	2
ԱՐՄԱՎԻՐ	ՀԱԱՀ	Ագրոբիզնես և ֆինանսներ	21	2
	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավարժություն-փրկարարական գործ	19	13
	ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)	18	14
	ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	13	9
	ՀԱՊՀ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	10	8
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	20	9
	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավարժություն-փրկարարական գործ	14	10
	ԳՊՀ (Գավառ)	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	13	4
	ԳՊՀ (Գավառ)	Իրավագիտություն	13	4
	ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)	12	6
ԼՈՌԻ	ՎՊՀ (Վանաձոր)	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	31	21
	ՎՊՀ (Վանաձոր)	Կառավարում (ըստ ոլորտի)	24	13
	ՎՊՀ (Վանաձոր)	Հոգեբանություն	23	10
	ՎՊՀ (Վանաձոր)	Իրավագիտություն	18	10
	ՎՊՀ (Վանաձոր)	Անգլերեն և գրականություն	15	9

	ՀԱԱՀ (Սիսիան)	Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա	7	1
ՄԾՑՈՒՆ	ՀԱԱՀ	Ագրոբիզնես և ֆինանսներ	7	2
	ՀՊՄՀ	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	5	3
	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավարժություն-ֆիթնես	4	4
	ԵՊՀ	Իրավագիտություն	3	
	ՀԱՊՀ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	3	2
ՏԱՎՈՇ	ԵՊՀ ԻՄ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	30	9
	ԵՊՀ ԻՄ	Զբոսաշրջություն	28	9
	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավարժություն-փրկարարական գործ	23	15
	ԵՊՀ ԻՄ	Պատմություն	15	3
	ԵՊՀ ԻՄ	Հոգեբանություն	12	3

Աղյուսակ 11-ից երևում է, որ վարչատարածքային միավորների մեծ մասում առաջին հայտով հայտագրվածների թվով առաջին տեղում են եղել տնտեսագիտական մասնագիտությունները («Կառավարում», «Ֆինանսներ», «Ագրոբիզնես և ֆինանսներ»)։

Աղյուսակ 12-ում ամենապահանջված մասնագիտությունների հնգյակները ներկայացված են ըստ ՀՀ վարչատարածքային միավորների քաղաքային և գյուղական բնակավայրերի տիպերի:

Աղյուսակ 12. ՀՀ մարզերում 2023 թ. հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի ամենապահանջված մասնագիտությունների հնգյակներն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի տիպերի

№	Բուհը	Մասնագիտությունը	Հայտագրվածների թիվը 1-ին հայտով	Ընդունվածների թիվը	№	Բուհը	Մասնագիտությունը	Հայտագրվածների թիվը 1-ին հայտով	Ընդունվածների թիվը
ԱՐԱԳԱԾՈՏՆ									
ՔԱՂԱՔՆԵՐ					**ԳՅՈՒՂԵՐ**				
1	ՀՊՏՀ	Տնտեսագիտություն	5	2	1	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավարժություն-փրկարարական գործ	13	7
2	ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	3	2	2	ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	8	6
3	ՀՊՄՀ	Անգլերեն և գրականություն	3	1	3	ՀՊՄՀ	Լոգոպեդիա	5	
4	ՀՊՄՀ	Հասարակագիտություն	2		4	ՀՊՄՀ	Պատմություն	5	2
5	ՀՊՄՀ	Հոգեբանություն	2	1	5	ԵՊՀ	Միջազգային հարաբերություններ	4	4
ԱՐԱՐԱՏ									
ՔԱՂԱՔՆԵՐ					**ԳՅՈՒՂԵՐ**				
1	ԵՊՀ	Իրավագիտություն	7	3	1	ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)	11	6
2	ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	4	2	2	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավարժություն-փրկարարական գործ	9	7
3	ՀՊՄՀ	Պարարվեստ	4	3	3	ՀԱԱՀ	Ագրոբիզնես և ֆինանսներ	9	1
4	ՀՊՏՀ	Սերվիս	3		4	ՀՊՄՀ	Հոգեբանություն	9	1
5	ԵՊՀ	Դեղագործական քիմիա	3	1	5	Մ. Մաշտոցի անվան համալսարան	Միջավայրի դիզայն	8	8

ԱՐՄԱՎԻՐ

ՔԱՂԱՔՆԵՐ						ԳՅՈՒՂԵՐ				
1	ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)	8	7		1	ՀԱԱՀ	Ագրոբիզնես և ֆինանսներ	16	2
2	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավար-ժություն-փրկարարական գործ	6	4		2	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավար-ժություն-փրկարարական գործ	12	8
3	ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	5	4		3	ՀՊՄՀ	Հոգեբանություն	7	2
4	ՃՇՀԱՀ	Գրաֆիկական դիզայն	5	5		4	ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)	7	5
5	ՀԱՊՀ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	4	2		5	ՀՊՄՀ	Պատմություն	6	3

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

ՔԱՂԱՔՆԵՐ						ԳՅՈՒՂԵՐ				
1	ԳՊՀ (Գավառ)	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	6	3		1	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավար-ժություն-փրկարարական գործ	11	8
2	ՀԱԱՀ	Ագրոբիզնես և ֆինանսներ	5			2	ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	9	5
3	ԵՊՀ	Իրավագիտություն	5	1		3	ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)	8	5
4	ԳՊՀ (Գավառ)	Իրավագիտություն	6	1		4	ԵՊՀ	Միջազգային հարաբերություններ	7	5
5	ՀՊՏՀ	Տնտեսագիտություն	4	2		5	ԳՊՀ (Գավառ)	Իրավագիտություն	7	3

ԼՈՌԻ

ՔԱՂԱՔՆԵՐ						ԳՅՈՒՂԵՐ				
1	ՎՊՀ (Վանաձոր)	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	17	10		1	ՎՊՀ (Վանաձոր)	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	9	6
2	ՎՊՀ (Վանաձոր)	Հոգեբանություն	16	7		2	ՎՊՀ (Վանաձոր)	Կառավարում (ըստ ոլորտի)	8	6
3	ՎՊՀ (Վանաձոր)	Իրավագիտություն	14	8		3	ՎՊՀ (Վանաձոր)	Անգլերեն և գրականություն	6	3
4	ՎՊՀ (Վանաձոր)	Կառավարում (ըստ ոլորտի)	13	6		4	ՎՊՀ (Վանաձոր)	Հոգեբանություն	4	1
5	ՀԱՊՀ ՎՄ	Տնտեսագիտություն	11	4		5	ՎՊՀ (Վանաձոր)	Պատմություն	4	2

ԿՈՏԱՅՔ

ՔԱՂԱՔՆԵՐ						ԳՅՈՒՂԵՐ				
1	ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	8	4		1	ՀԱԱՀ	Ագրոբիզնես և ֆինանսներ	6	
2	ՀԱԱՀ	Ագրոբիզնես և ֆինանսներ	6			2	Մ. Մաշտոցի անվան համալսարան	Միջավայրի դիզայն	6	6

3	ՀՊՏՀ	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	6	3		3	ՀՊՏՀ	Շուկայագիտություն (մարքեթինգ), (ըստ ոլորտի)	5	4
4	ՀՊՏՀ	Շուկայագիտություն (մարքեթինգ), (ըստ ոլորտի)	5	5		4	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավար-ժություն-փրկարարական գործ	5	4
5	ԵՊՀ	Իրավագիտություն	4	3		5	ՀՊՄՀ	Հոգեբանություն	4	1
ՇԻՐԱԿ										
ՔԱՂԱՔՆԵՐ						**ԳՅՈՒՂԵՐ**				
1	ՇՊՀ (Գյումրի)	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	23	15		1	ՇՊՀ (Գյումրի)	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	15	8
2	ՇՊՀ (Գյումրի)	Կառավարում (ըստ ոլորտի)	18	5		2	ՇՊՀ (Գյումրի)	Նախնական զինվորական պատրաստություն	11	11
3	ՀՊՏՀ ԳՄ	Կառավարում (ըստ ոլորտի)	15	7		3	ՇՊՀ (Գյումրի)	Կառավարում (ըստ ոլորտի)	11	3
4	ՀԱՊՀ ԳՄ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	13	6		4	ՇՊՀ (Գյումրի)	Հոգեբանություն	9	5
5	ՇՊՀ (Գյումրի)	Նախնական զինվորական պատրաստություն	11	7		5	ՇՊՀ (Գյումրի)	Իրավագիտություն	8	1
ՍՅՈՒՆԻՔ										
ՔԱՂԱՔՆԵՐ						**ԳՅՈՒՂԵՐ**				
1	ՀԱՊՀ ԿՄ	Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում	20	3		1	ԳՊՀ (Գորիս)	Կառավարում (ըստ ոլորտի)	13	2
2	ՀԱՊՀ ԿՄ	Տնտեսագիտություն	19	5		2	ԳՊՀ (Գորիս)	Իրավագիտություն	6	1
3	ԳՊՀ (Գորիս)	Կառավարում (ըստ ոլորտի)	16	1		3	ԳՊՀ (Գորիս)	Պատմություն	5	1
4	ԳՊՀ (Գորիս)	Իրավագիտություն	6	1		4	ՀԱԱՀ (Սիսիան)	Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա	5	1
5	ԳՊՀ (Գորիս)	Հայոց լեզու և գրականություն	4	3		5	ՀԱԱՀ (Սիսիան)	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	4	
ՎԱՅՈՑ ՁՈՐ										
ՔԱՂԱՔՆԵՐ						**ԳՅՈՒՂԵՐ**				
1	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավարժություն-ֆիթնես	3	3		1	ՀԱԱՀ	Ագրոբիզնես և ֆինանսներ	5	
2	ՃՇՀԱՀ	Գրաֆիկական դիզայն	3	3		2	ՀՊՄՀ	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	3	
3	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավար-	2	2		3	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական	2	

		ժություն-փրկարարական գործ						մանկավարժություն-բռնցքամարտ		
4	ԵՊՀ	Միջազգային հարաբերություններ	2	2		4	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավարժություն-ֆուտբոլ	2	
5	ԵՊՀ	Իրավագիտություն	2			5	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավարժություն-աթլետիկա	2	

ՏԱՎՈՒՇ										
ՔԱՂԱՔՆԵՐ						ԳՅՈՒՂԵՐ				
1	ԵՊՀ ԻՄ	Զբոսաշրջություն	19	5		1	ԵՊՀ ԻՄ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	18	5
2	ԵՊՀ ԻՄ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	10	4		2	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավար-ժություն-փրկարարական գործ	16	10
3	ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավար-ժություն-փրկարարական գործ	7	5		3	ԵՊՀ ԻՄ	Հոգեբանություն	9	3
4	ԵՊՀ ԻՄ	Պատմություն	6	2		4	ԵՊՀ ԻՄ	Զբոսաշրջություն	8	4
5	ԵՊՀ ԻՄ	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	4	3		5	ԵՊՀ ԻՄ	Պատմություն	8	1

Աղյուսակում երևում է, որ քաղաքային բնակավայրերում ամենապահանջվածներն են եղել «Իրավագիտություն» (ԵՊՀ, Գավառի ՊՀ, ՎՊՀ, Գորիսի ՊՀ), «Կառավարում» (ՀՊՏՀ, ՎՊՀ, ՇՊՀ, ՀՊՏՀ-ի Գյումրու մասնաճյուղ, Գորիսի ՊՀ), «Ֆինանսներ» (ՀՊՏՀ, ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղ), «Տնտեսագիտություն» (ՀՊՏՀ, ՀԱՊՀ-ի Վանաձորի և Կապանի մասնաճյուղեր,) և «Իրավագիտություն» (ԵՊՀ, ՎՊՀ, Գավառի ՊՀ, Գորիսի ՊՀ) մասնագիտությունները: Գյուղական բնակավայրերում ամենապահանջված մասնագիտություններն են եղել «Մասնագիտական մանկավարժություն-փրկարարական գործ» (ՀՖԿՍՊԻ), «Կառավարում» (ՀՊՏՀ, ՎՊՀ, ՇՊՀ, Գորիսի ՊՀ), «Հոգեբանություն» (ՀՊՄՀ, ՎՊՀ, ՇՊՀ, ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղ), «Պատմություն» (ՀՊՄՀ, ՎՊՀ, Գորիսի ՊՀ, ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղ) մասնագիտությունները:

3.5. 2023 Թ. ՉՀԱՅՏԱԳՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2023 թ. ՀՀ բուհերի հեռակա ուսուցման ընդունելության նպատակով հայտագրված դիմորդների ընտրած մասնագիտությունների ցանկում չի ներառվել 29 բուհի 94 մասնագիտություն, որոնցից 5 բուհի 14 մասնագիտությունը՝ պետական, 24 բուհի 80 մասնագիտությունը՝ ոչ պետական սեկտորից: Այդ մասնագիտությունների համար հատկացված է եղել 2115 տեղ, որից 109-ը՝ պետական, 2006-ը՝ ոչ պետական բուհերում: Պետական բուհերից չհայտագրված մասնագիտություններ են ունեցել ՀՊՄՀ-ն (1 մասնագիտություն), ԵՊԿ-ի Գյումրու մասնաճյուղը (5), ԵԹԿՊԻ-ն (2), Գավառի պետական համալսարանը (3) և ՀՖԿՍՊԻ-ն (3):

Չհայտագրված մասնագիտությունների ցանկում ամենահաճախ հանդիպողը եղել է «Իրավագիտությունը» և «Կառավարումը» (Եվրոպական համալսարանում և մասնաճյուղերում ու ոչ պետական 7 այլ բուհերում):

ԱՄՓՈՓՈՒՄ

2023 թ. ԳԹԿ-ն կազմակերպել և իրականացրել է ՀՀ պետական և ոչ պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության քննությունները և մրցույթը: Այդ բուհերին հեռակա ուսուցման ընդունելության նպատակով հատկացվել է 10550 վճարովի տեղ:

2023 թ. սեպտեմբերի 5-25-ն ընկած ժամանակահատվածում ԳԹԿ dimord.am կայքում իրականացվել է ՀՀ պետական և ոչ պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության քննությունների և մասնագիտությունների հայտագրումը: Դիմորդները հայտագրել են մեկ բուհի՝ մինչև երեք մասնագիտություն, որոնց համար սահմանված են եղել ընդունելության միևնույն քննությունները: «Ընդունելության քննություններ» բաժնի սյունակում թեստային քննությունների առարկաները «կամ» բառով տարանջատված լինելու դեպքում նրանց թույլատրվել է ընտրել նշված քննություններից մեկը:

Հեռակա ուսուցման ընդունելության քննություններ հանձնելու նպատակով dimord.am կայքում թեստային և ներբուհական քննություններ է հայտագրել 4225 դիմորդ: Նրանցից 3373-ը դիմում-հայտում նշել է երկու թեստային քննություն, 835-ը՝ մեկից ավելի ներբուհական, 17-ը՝ մեկական թեստային և ներբուհական քննություններ: Հետևաբար, առնվազն մեկ թեստային քննություն է հայտագրել 3390 դիմորդ:

Հայտագրված դիմորդներից 4116-ը եղել են Հայաստանի, 53-ը՝ Ռուսաստանի, 45-ը՝ Արցախի, 4-ը՝ Վրաստանի, 7-ը՝ այլ երկրների քաղաքացիներ:

2023 թվականի շրջանավարտ է եղել 2563 դիմորդ (ՀՀ-ից 2479, Արցախից 37, ՌԴ-ից 38, Վրաստանից 3, այլ երկրներից 6 դիմորդ), նախորդ տարիների՝ 1662-ը (ՀՀ-ից 1637, Արցախից 8, ՌԴ-ից 15, այլ երկրներից 2):

Թեստային քննություններն անցկացվել են 14 քննական կենտրոններում:

- ***Թեստային քննություններ***

Ինչպես նշվեց վերևում, հեռակա ուսուցման ընդունելության նպատակով 2023 թ. առնվազն մեկ թեստային քննություն է հայտագրել 3390 դիմորդ:

Ընդունելության մրցույթին մասնակցելու համար դիմորդները կա՛մ հանձնել են քննություն, կա՛մ պահպանելով տվյալ առարկայի քննությունից նախկինում ունեցած միավորը՝ կրկին հանձնել են քննություն, կա՛մ պահպանել են ունեցած միավորը:

Թեստային քննություններն անցկացվել են 2023 թ. հոկտեմբերի 22-ից 27-ը: Ամենամեծ քանակությամբ հայտեր եղել են «Մաթեմատիկա» առարկայից (1440 հայտ):

Թեստային քննությունների միջին միավորները բաշխվել են 4.3-ից (ֆիզիկա) մինչև 10.8 (գերմաներեն) միջակայքում: 20 միավոր արձանագրվել է միայն հայոց պատմությունից: Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդները կազմել են տվյալ քննության մասնակիցների 44.7-ից (անգլերեն) մինչև 91.7 (ֆիզիկա) տոկոսը, բացի գերմաներենից (14.3%): 18-20 միջակայքում միավորներ են արձանագրվել միայն մաթեմատիկայից, հայոց լեզու և հայ գրականությունից, անգլերենից և հայոց պատմությունից (0.2-6.1%):

Թեստային քննությունների ընդհանուր միջին միավորներից բարձր միջին միավորների քանակով ՀՀ վարչատարածքային միավորներից առաջին երկու տեղերը զբաղեցրել են Երևանը (8 առարկայից) և Կոտայքի մարզը (6 առարկայից): Մաթեմատիկայից, անգլերենից և գերմաներենից ամենաբարձր միջին միավորն արձանագրվել է Երևանում (համապատասխանաբար՝ 7.9, 9.9, 11.9), կենսաբանությունից, ֆիզիկայից և աշխարհագրությունից՝ Արմավիրի մարզում (համապատասխանաբար՝ 6.3, 5, 8.5), հայոց լեզու և հայ գրականությունից՝ Արարատի (7), ռուսաց լեզվից՝ Լոռու (9.8), հայոց պատմությունից՝ Կոտայքի (10), քիմիայից՝ Տավուշի (10.5) մարզերում:

Ըստ բնակավայրի տիպի դիտարկմամբ արձանագրվել է, որ ընդհանուր միջին միավորներից բարձր միջին միավորներ են արձանագրվել միջին և փոքր քաղաքներում (հայոց լեզու և հայ գրականությունից, հայոց պատմությունից, ֆիզիկայից) և գյուղերում (կենսաբանությունից):

Թեստային քննություններ հայտագրած 3390 դիմորդներից 1556-ը եղել են իգական սեռի, 1834-ը՝ արական: Իգական սեռի դիմորդների հավաքած միջին միավորները հիմնականում բարձր են եղել տվյալ քննության ընդհանուր միջին և արական սեռի դիմորդների հավաքած միջին միավորներից: Իգական և արական սեռերի դիմորդների հավաքած առավելագույն միջին միավորներն արձանագրվել են գերմաներենից (համապատասխանաբար՝ 11.5 և 9.1), ամենացածրը՝ ֆիզիկայից (համապատասխանաբար՝ 5.9 և 4.1) :

- ***Բուհերի ընդունելության մրցույթը***

ՀՀ բուհերում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության նպատակով ԳԹԿ-ի կողմից անցկացվող մրցույթի ցանկում ընդգրկված բուհերին

պետության կողմից տրամադրված 10550 վճարովի տեղերից 8435-ի ընդունելության նպատակով dimord.am կայքում 2023 թ. սեպտեմբերի 5-ից մինչև 25-ը ներառյալ դիմորդները լրացրել են 4225 դիմում-հայտ՝ նշելով մեկ բուհի մինչև երեք մասնագիտություն, որոնց համար սահմանված են եղել ընդունելության միևնույն քննությունները: Հայտագրվածներից 3940-ն ընտրել են պետական, 285-ը՝ ոչ պետական բուհեր:

Բուհերի ընդունելության մրցույթի արդյունքում ընդունվել է 2113 դիմորդ (հայտագրվածների 50%-ը), որոնցից 2016-ն ընդունվել են ընդհանուր մրցույթով, 97-ը՝ արտոնություններով: Երկու քննություններից ունեցած դրական գնահատականներով մրցույթից դուրս է մնացել 66 դիմորդ, անբավարար գնահատական(ներ)ով չի ընդունվել 1423-ը, քննության չներկայանալու պատճառով՝ 623-ը:

Արտոնություններով ընդունված 97 դիմորդներն ընդունվել են պահուստային տեղերի հաշվին: Ըստ այդմ, թափուր են մնացել հատկացված 10550 տեղերից 8534-ը (80.9%), իսկ հայտագրված մասնագիտություններին հատկացված 8435 տեղերից՝ 6419-ը (75.2%):

2113 ընդունվածներից 2085-ն ընդունվել է առաջին հայտով, 12-ը՝ երկրորդ, 16-ը՝ երրորդով: Հայտագրված և ընդունված դիմորդների թվով առաջատար է եղել ՀՊՏՀ-ն (համապատասխանաբար՝ 675 և 395 դիմորդ):

Բուհերի հեռակա ուսուցման ընդունելության նպատակով ՀՀ-ից 1-ին հայտով հայտագրվել է 4188 դիմորդ և ընդունվել է 2095-ը (50%), որոնք կազմել են հայտագրված 4225 և ընդունված 2113 դիմորդների 99,1%-ը:

Բոլոր ցուցանիշներով առաջին տեղում է եղել մայրաքաղաք Երևանը՝ 1562 հայտագրված և 857 ընդունված (Երևանից հայտագրվածների 54.9%-ը): Մարզերից հայտագրվածների թվով առաջատար է եղել Շիրակը (353 դիմորդ), ընդունվածների թվով՝ Արմավիրը (171), ընդունվածների տոկոսով՝ Վայոց ձորը (53.9%): Ընդունվածների 50-ից բարձր տոկոս է արձանագրվել Երևանում, Արմավիրի, Կոտայքի և Տավուշի մարզերում (51,8-54,9%):

Դիմորդների սեռատարիքային կազմի վիճակագրությունն ունի հետևյալ պատկերը: Հեռակա ուսուցման ընդունելության նպատակով մասնագիտություն հայտագրած 4225 դիմորդներից 2382-ը (56.4%) եղել են արական սեռի ներկայացուցիչներ, 1843-ը (43.6%)՝ իգական սեռի, ընդունված 2113 դիմորդներից 1075-ը (50.9%)՝ արական, 1038-ը (49.1%)՝ իգական սեռի ներկայացուցիչներ: Իգական սեռի ներկայացուցիչները հայտագրվածների թվով զգալիորեն զիջել են արական սեռին (539-ով): Ընդունվածների թվերն ըստ սեռերի եղել են գրեթե հավասար (արական սեռը՝ 37-ով ավելի): Ընդունվածների կեսից ավելին եղել են 2005 թ. ծնվածները (2023 թ. շրջանավարտները), որոնց մեջ գերակշռել է իգական սեռը (բոլոր ընդունվածների 28.6%-ը): Հայտագրված դիմորդները եղել են 18-ից 68 տարեկան (իգական սեռը՝ 18-68, արականը՝ 18-55), բուհ ընդունվածները՝ 18-ից 60 տարեկան (իգական սեռը՝ 18-60, արականը՝ 18-59): Իգական սեռի դիմորդներից ամենաավագն ընդունվել է ԵՊԿ-ի Գյումրու մասնաճյուղ, արական սեռինը՝ ԵԹԿՊԻ:

2023 թ. ամենապահանջված 10 մասնագիտություններն են եղել ՀՊՏՀ-ի «Ֆինանսներ», «Կառավարում», «Շուկայագիտություն», «Հաշվապահական հաշվառում և հարկում», ՀՖԿՍՊԻ-ի «Մասնագիտական մանկավարժություն-փրկարարական գործ», ՀԱԱՀ-ի «Ագրոբիզնես և ֆինանսներ», ԵՊՀ-ի «Իրավագիտություն», ՀՊՄՀ-ի «Հոգեբանություն», Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի «Միջավայրի դիզայն» և ՀԱՊՀ-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտությունները: Այդ մասնագիտությունների տասնյակին հատկացված 953 տեղերը կազմել են 2023 թ. բուհերի հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի գործընթացում հայտագրված մասնագիտություններին հատկացված 8435 տեղերի 11.3%-ը, առաջին հայտով 1112 հայտագրվածները՝ հայտագրվածների ընդհանուր թվի 26.3%-ը, 613 ընդունվածները՝ բոլոր ընդունվածների 29%-ը: Հայտագրվածների թվով առաջին երեք տեղերը զբաղեցրել են ՀՊՏՀ-ի «Ֆինանսներ», «Կառավարում» և ՀՖԿՍՊԻ-ի «Մասնագիտական մանկավարժություն-փրկարարական գործ» մասնագիտությունները: Առաջին հայտով այդ մասնագիտություններն ընտրել է 468 դիմորդ (բոլոր հայտագրվածների 11.1%-ը): Ընդունվել է 294 դիմորդ (բոլոր ընդունվածների 13.9%-ը): Նշված տասնյակից ամբողջությամբ լրացել են ՀՖԿՍՊԻ-ի «Մասնագիտական մանկավարժություն-փրկարարական գործ», ԵՊՀ-ի «Իրավագիտություն» և Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի «Միջավայրի դիզայն» մասնագիտություններին հատկացված տեղերը:

ՀՀ վարչատարածքային միավորներում հայտագրվածների թվով առաջին տեղը զբաղեցրել են տնտեսագիտական մասնագիտությունները:

Քաղաքային բնակավայրերում ամենապահանջված մասնագիտություններն են եղել «Իրավագիտությունը, «Ֆինանսները», «Տնտեսագիտությունը» և «Իրավագիտությունը», գյուղական բնակավայրերում՝ «Մասնագիտական մանկավարժություն-փրկարարական գործը», «Կառավարումը», «Հոգեբանությունը», «Պատմությունը»:

2023 թ. ՀՀ բուհերի հեռակա ուսուցման ընդունելության հայտագրման փուլում չի հայտագրվել 29 բուհի 94 մասնագիտություն, այդ թվում՝ 5 պետական բուհի 14 մասնագիտություն և 24 ոչ պետական բուհի 80 մասնագիտություն: Այդ մասնագիտություններին հատկացված է եղել 2115 տեղ (109-ը՝ պետական, 2006-ը՝ ոչ պետական բուհերում): Պետական բուհերից չհայտագրված մասնագիտություններ են ունեցել ՀՊՄՀ-ն, ԵՊԿ-ի Գյումրու մասնաճյուղը, ԵԹԿՊԻ-ն, Գավառի պետական համալսարանը և ՀՖԿՍՊԻ-ն: 2023 թ. հեռակա ուսուցման ընդունելության գործընթացում չհայտագրված մասնագիտությունների ցանկում ամենահաճախը հանդիպել են ոչ պետական բուհերի «Իրավագիտություն» և «Կառավարում» մասնագիտությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. 2023 թ. միասնական քննությունների, ինչպես նաև բուհերի հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի դիմորդների հաշվառման էլեկտրոնային տվյալների բազաներ

2. 2023/2024 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման նպատակով ՀՀ բուհերին հատկացված ընդունելության տեղերի էլեկտրոնային բազաներ

3. Հայաստանի Հանրապետության պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության կանոններ (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166688)